

Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն

Ե Ի Ի Ր Վ.Ա.ՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Շար. տիս 1919 թզմ. էջ 258)

Կայսրութեան վերջին ժամանակները.

Ժե դարու առաջին կիսուն մէջ՝ ձեկնովայի գաղթականութեան մէջ սկսան խլրտուներ երևնալ: Հախ և առաջ, Ալէքսիս Գ.ի իշխանութեան ժամանակ, ձեկնովայի և Տրապիզոնի միջև պատերազմը ծագեցաւ՝ մեզ անծանօթ պատճառներով, փշնամութեանց միջոցին, կողմա Դարիկոյ անուամբ ձեկնովացի ծովակալ մը՝ երեք ցոկանաւորու գլուխն անցած՝ Ալէքսի նաւատորմիդը ջախջախեց, ամբացած վանքի մը տիրեց, վերածեց զայն զինարանի մը իր գործածութեան համար, և վերջապէս՝ կայսրը ստիպուեցաւ բոլոր փաստները հատուցանել. նաեւ թոյլ տրուեցաւ իրեն ուր իր պարտքերն հատուցանէ ոչ դրամով՝ այլ զինով և կաղիններով: Քանի մը տարի վերջ՝ Տրապիզոնի ժողովուրդը ձեկնովացւոց դէմ կը յարձակէր, կը խուժէր անոնց թաղին մէջ՝ յափշտակելով ամէն ինչ. կայսրը այն ատեն միայն որոշեց ետ դարձնել ամէն ինչ՝ երբ ճենովական պետութեանն ընդունեցաւ խիստ կերպով շարադրուած և սպառնալից թուղթ մը: Ալէքսիսի որդին և յաջորդը Յովհաննէս Դ. (Կալոյոյվհաննէս), ամէն ինչ թողուց այն աստիճանին հասնի որ՝ կայսրութեան շատ մը տեղեր և նոյն իսկ մայրաքաղաքին մէջ՝ ձեկնովացիները նախատուէին և գէշ կերպով վարուէին: ձեկնովայի տոժը ձիանօ Զիլկոյոյ՝ ազգաբարձութիւններ գրեց իրեն, որոնց շատ իրաւացի կերպով պատասխանեց կայսրը, գանգատելով քանի մը ձեկնովացի հպատակներու մասին՝ որոնք կայսրութեան օրէնքներուն չէին ուզեր հնազանդիլ: Տոժը խորհուրդ առած ըլլալով որ կայսրը դեսպան մը դրկէ ի ձեկնովայ, փոփոխակի եղած խնդիրներուն հաշտութեան համար, սա՝ այս պաշտօնիս կանչեց Գեորգ Ալմիրոզիոս մէկը: Բայց այս անձին չափազանց պահանջները՝ հաշտութեան փորձերը չյաջողոցոյին: Էտեաբար՝ բոլոր այս ըրջանին Տրապիզոն իր քաղաքացիներուն և ձեկնովացւոց միջև արիւնահեղ կոխներու անձնատուր եղաւ:

Ընդհակառակն՝ Վենետիկեցի ջանացին միշտ

աւելի մտերիմ և խոհական քաղաքագիտութեամբ բարեկամ ժալ Տրապիզոնի ժողովրդեան և պետերուն հետ: Եթէ երբեմն փոքր խնդիրներ տեղի կ'ունենային, այն ժամանակ երկու կողմէ՝ նոր պայմաններով հաշտութիւն կը գոյանար: Իրենց նաւերը կանոնաւոր կերպով կը կատարէին իրենց ճամբորդութիւնները: Այլ ևս այն ժամանակներն եւք երբ Տաճիկները կամաց կամաց կը սկսին իրենց արշաւանքները. և ճիշտ այն պարագային՝ երբ Տրապիզոնի նաւերէն մին դէպի Ալեմուտք կ'ողողուէր, զժբաղդութիւնն ունեցաւ մտնել ի կ. Պոլիս, երբ ճիշտ այն պահուն Տաճիկները քաղաքը կը պաշարէին. որով նաւը ստիպուեցաւ քաղաքին պաշտպանութեան մասնակցիլ:

Ան օրէն երբ կ. Պոլիս ինկաւ Տաճիկներուն ձեռքը, իտալացւոց համար Տրապիզոնի ճամբան արգիւտեցաւ, և այս տեղոյն գաղթականութեանց ու մայր հայրենիքի միջև եղած յարաբերութիւնները դժուարացան (1458):

Միջոցեւ իտալական հին գաղթականութիւնները իրենց գործունէութենէն կը դադրէին, կը տեսնեցք այս հետաքրքրական երեւոյթը՝ թէ Զիլկեցեցիք կը սկսին աւետական նոր շարժում մը Տրապիզոնի հետ: Կայ դաշնաթուղթ մը, 14-15 դեկտեմբեր 1460 թուականով, որով Զիլկեցեցիք կը խնդրեն ունենալ Տրապիզոնի մէջ թաղ մը և հիւպատոսարան մը, յանձն առնելով վաճառել մուսքի վրայ 2% մաքսը, իսկ հիւքի ժամանակ ազատութիւն մաքսերէ: Այս զաշխքը կնքուեցաւ Տրապիզոնի վերջին կայսր Դաւիթին և Զիլկեցեցի դեսպան Միքայել Ալիկիւրիի միջև: Բայց հազիւ թէ սկսած էին վաճառիկ յարաբերութիւնները, Մէմէտ Բ. մէկ մեծ արշաւանքով՝ 1631ին կը մտնէր յաղթական ի Սինոպ, կը տիրէր Տրապիզոնի, և վերջին կայսրը գերի կը տանէր ի կ. Պոլիս: Այս յանկարծական յեղաշրջումը մահացու հարուած մ'եկաւ իտական վաճառականութեան համար, որով վերականգնելու համար՝ ստիպուեցան դարեւորդ պարմանները խորհիլ:

ՄԻՀԱԵԱ ՇԵՆԿԵԱՆ